# ՎԵՐՆԱՇԵՆ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Հակոբ Հակոբյան

Հեռախոս՝ +374 93380035

Բնակչություն՝ 1338

Վերնաշենի համայնքը գտնվում է Վայոց Ձորի մարզի հյուսիս արևելյան հատվածում։ Հեռավորությունը մարզկենտրոնից 5կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ։ Սամանակից է Գլաձոր, Մալիշկա, Գողթանիկ համայնքներին։
Բարձրությունը ծովի մակարդակից 1450մ է։ Գյուղի նախկին անվանումը եղել է Սրկողովք։
Վերնաշեն գյուղը հիմնադրվել է 1829թվականին։ Գյուղի բնակիչների նախնիները եկել են Սալմաստ գավառից։ Բնակիչների հիմնական զբաղմունքը՝ խաղողագործություն, հողագործություն, անասնապահություն։ Համայնքի ընդհանուր տարածքը 5323հա է։ Համայնքն ունի խաղողի և պտղատու այգիներ։
Համայնքի տարածքով անցնում է Սրկողունք գետը։ Համայնքն ունի պատմամշակութային եկեղեցիներ։ Համայնքի հյուսիսային մասում գտնվում է Սպիտակավոր վանքը, Պռոշաբերդը, հյուսիս-արևելյան մասում գտնվում է Թանադե վանքը, Արկազի Սուրբ Խաչ վանքը, որը եղել է Վայոց ձորի նշանավոր ուխտատեղի։ Համայնքում է գտնվում Գլաձորի համալսարանի թանգարանը։
Համայնքն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, կուլտուրայի տուն և փոստային բաժանմունք։